

Նկատելով որ Թորոս Տարօնեցի հոս կը յիշէ իր Մարտիրոս եղբայրը իբր քահանայ առաջին անգամ ըլլալով, կը խորհիմ որ իր կրտսեր եղբայրն է : Այս ենթադրութիւնս եթէ ճիշտ է, այն ատեն Թորոսի կրտսեր եղբայրը քահանայութեան հասուն տարիքին հասած էր երբ Թորոս կը գրէր ու կը նկարէր այս ձեռագիրը, շատ հաւանաբար երբ առնուազն յիսուն մը կար :

Յուցակագիր սրբազանը հիացմունքով կը խօսի ձեռագրին ծաղկումներուն եւ մանրանկարներուն մասին : «ՄԱԶԲՆԱՏԱՌՔ՝ ոսկեղրուազ, ծաղկենկար Թռչնագիր, երբեմն զարդագիր աչնուազոյն գեղարուեստով եւ զմայլելի նրբութեամբ, յար եւ նման մեր Թիւ մէկ աւետարանի սկզբնատառերուն . — ԼՈՒՍԱՆՅԱԶԱՐԴՔ՝ բազմաթիւ են, ոսկեղրուազ, նուրբ եւ նկարէն : Ծրածանային ծփանք մը կայ բոլորին ալ մէջ . ախտո՛ս որ խոնաութեան տակ մասամբ գունաթափ եղած են, եւ անզոչութեամբ կտրատուած նոր կազմի պահուն . — ՄԱՆՐԱՆԿԱՐՔ՝ սկիզբը հատ մը, կիսովին քայքայուած . բայց մնացածէն իսկ կարելի է դիւրաւ դատել անոր գեղարուեստական նուրբ արժէքը . համակ ոսկեղրուազ, կիտուածանման . . . » եւլն : (Էջ 187) :

Ինչպէս ըսի ինչ որ բացառիկ է ծաղկումներուն եւ մանրանկարներուն ճոխ եւ ոսկեղրուազ ըլլալն է : Փոխանակ քառագոյն, Թեթեւ ծաղկումի եւ մանրանկարի մենք Հայէպի այս Թիւ 110-ին մէջ կը դաննանք «կիտուածանման» աշխատանք : Արդ բնական է պահ մը նոյն իսկ տարակուսինք որ մանրանկարները եւ ծաղկումները յետոյ ոսկուած են, երեւոյթ մը որ դժբախտաբար կը պատահի հայ ձեռագրաց մէջ : Սակայն ատիկա ստիպուած ենք մերժել քանի որ Թորոս այս ձեռագրին մէջ երկու տեղ ՈՍԿԵՂՐՈՎ ԻՍԿ յիշատակագրած է : Էջ 114 «Տր . յս . քս . Ած . մեր ողորմեա՛ մեղապարտ գրչի Թորոսի եւ նկարչի եւ ծնաւոցայ մերոց ամէն» : եւ դարձեալ էջ 241՝ «Տր . յս . ողորմեա մեղապարտ գրչի Թորոսի ամէն» :

Ուրեմն անտարակոյս ձեռագիրը ոսկողն նոյն իսկ եղած է Թորոս ինքն : Եւ ասիկա գուցէ բացատրուի, որովհետեւ ըստ երեւոյթի ձեռագիրը նոյն իսկ ինքզինքին համար պատրաստած է : Ահա այդ պատճառաւ Թորոս Տարօնեցի իրեն գրեթէ անսովոր շուայութեամբ ծաղկած է այս ձեռագիրը :

Միջանկեալ հոս աւելցնենք որ ըստ Արտաւազը Սրբազանի Հայէպի Թիւ 1 ձեռագիր աւետարանը Թորոս Տարօնեցիի տա-